23.07.2025-10.07.2026թթ. ընկած ժամանակահատվածի համար Արդարադատության նախարարության վերահսկողական վարչության փորձագետ Էլեն Խաչատուրի Ղալթախչյանի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարության վերահսկողական վարչության փորձագետ Էլեն Խաչատուրի Ղալթախչյանս, հայտնում եմ, որ 2025 թվականի հուլիսի 23-ին կնքված N 45 պայմանագրի հիման վրա աշխատում եմ Արդարադատության նախարարության վերահսկողական վարչությունում՝ որպես փորձագետ:

2025 թվականի հուլիսի 23-ից մինչև 2026 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում պայմանագրով նախատեսված գործառույթների և պարտականությունների շրջանակներում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

• Մասնակցել եմ Արդարադատության նախարարի՝ 2025 թվականի օգոստոսի 18-ի և 2026 թվականի մարտի 10-ի՝ «Ուսումնասիրություն իրականացնելու մասին» N 534-Ա և N 107-Ա հրամաններով նշանակված վերահսկողական ոլորտն ընդգրկող սուբյեկտների գործունեության ուսումնասիրություններին, որոնց շրջանակներում իրականացրել եմ համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն: Նախապատրաստել եմ նաև համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ, որոնց հիման վրա հարուցվել են համապատասխան ծառայողական քննություններ:

• Իրականացրել եմ Արդարադատության նախարարություն մուտքագրված Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն առնչվող պետական մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված ընդհանուր թվով **315** դիմումների (բողոքների) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընթացքի ապահովում:

Միաժամանակ, մի շարք դիմում-բողոքների և դրանց վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացված տեղեկատվության և կատարողական վարույթների նյութերի ուսումնասիրության արդյունքներով՝ Ծառայություն են ուղարկվել

պարզաբանումներ ներկայացնելու և համապատասխան դիրքորոշում հայտնելուն ուղղված գրություններ, որոնց հիման վրա գլխավոր հարկադիր կատարողի համապատասխան հրամաններով նշանակվել և իրականացվել են թվով 2 ծառայողական քննություններ:

• Իրականացրել եմ նաև պայմանագրով նախատեսված գործառույթներից բխող ընթացիկ հանձնարարականներ, պահպանել եմ գործող օրենսդրության, ներքին կարգապահական կանոնների և ծառայողական գաղտնիության պահպանման պահանջները:

• Ներգրավված եմ նաև Արդարադատության նախարարի 2026 թվականի հուլիսի 2-ի՝ «Ուսումնասիրություն իրականացնելու մասին» N 371-Ա հրամանով նշանակված աշխատանքներում:

Հարգանքով՝

Էլեն Ղալթախչյան

10.07.2026